ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/1-11 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 12.04.2023թ.

**ՀՀ պաշտպանության նախարարությունը,** ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի,** ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»,** մի կողմից, և **«Ֆարմ Թրաստ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ն,** ի դեմս տնօրեն **Ա. Բաղյանի**, որը գործում է «Ֆարմ Թրաստ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Վաճառող»,** մյուս կողմից, հիմք ընդունելով **03.02.2023թ.** կնքված **№ԳՀԱՊՁԲ-23-9/1-11** գնման պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին:

**1. *Համաձայնագրի առարկան***

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն № 1 և № 2 Հավելվածների:

1.1.1 Պայմանագրի 6.3 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու կամ չմատակարարելու դեպքում:

1.2 Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, Համաձայնագրով նախատեսված ծավալներով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխան ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք)՝ համաձայն Համաձայնագրի № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի № 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***3 380 400(երեք միլիոն երեք հարյուր ութսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Համաձայնագրի գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով սահմանված կարգով, բայց ոչ ուշ, քան մինչև 11.12.2023թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ֆարմ Թրաստ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 1570076313590100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00043772 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ա. ԲԱՂՅԱՆ |

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/1-11 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV անվանումը | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | մատակարարման ժամկետը 2023թ. 2-րդ եռամսյակ |
| 59 | պարենտերալ սնուցման լուծույթներ | I խցիկ- L-ալանին, L- արգինին, գլիցին, L-հիստիդին, L-իզոլեյցին, L- լեյցին, L-լիզին (լիզինի ացետատ), L-մեթիոնին, L-ֆենիլալանին, L-պրոլին, L-սերին,տաուրին, L-թրեոնին, L- տրիպտոֆան, L-թիրոզին, L-վալին, կալցիումի քլորիդ (կալցիումի քլորիդի դիհիդրատ), նատրիում գլիցերոֆոսֆատ (նատրիում գլիցերոֆոսֆատի հիդրատ), մագնեզիումի սուլֆատ (մագնեզիումի սուլֆատի հեպտահիդրատ), կալիումի քլորիդ, նատրիումի ացետատ(նատրիումի ացետատի տրիհիդրատ), ցինկի սուլֆատ(ցինկի սուլֆատի հեպտահիդրատ), խցիկ II- գլյուկոզ (գլյուկոզի մոնոհիդրատ), խցիկ III-սոյայի յուղ, տրիգլիցերիդներ, ձիթապտղի յուղ, ձկան յուղ (հարստացված օմեգա-3 թթուներով)camera I- L-alanine, Larginine, glycine, L-histidine, L-isoleucine, Lleucine, L-lysine (lysine acetate), Lmethionine,L-phenylalanine, L-proline, Lserine, taurine, L-threonine, L-triyptophan, L-tyrosine, L-valine, calcium chloride(calcium chloride dihydrate),sodium glycerophosphate (sodium glycerophosphate hydrate), magnesium sulphate (magnesium sulphate heptahydrate), potassium chloride, sodium acetate (sodium acetate trihydrate), zinc sulphate (zinc sulphate heptahydrate),camera II-glucose (glucose monohydrate), camera III-soya-bean oil, triglycerides, olive oil, fish oil (rich in omega-3) | հատ | 30 | 19,200 | 576,000 | 30 |
| 61 | բժշկական օգնության միջոցներ | սևոֆլուրան : sevofluran | հատ | 60 | 46,740 | 2,804,400 | 60 |

Հավելված N 2
№ ԳՀԱՊՁԲ-23-9/1-11 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV կոդը | CPV անվանումը | նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2023թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների՝ ընդ որում | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 11.12.2023թ. |
| 59 | 33691130/501 | պարենտերալ սնուցման լուծույթներ | 576,000 | 576,000 | 576,000 |
| 61 | 33191580/504 | բժշկական օգնության միջոցներ | 2,804,400 | 2,804,400 | 2,804,400 |
| Ընդամենը՝ | | | | | 3,380,400 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ֆարմ Թրաստ» հայ-ռուսական ՀՁ ՍՊԸ
տնօրեն

Ա. ԲԱՂՅԱՆ